ԻՄ ԿՅԱՆՔԸ ԾԱԾԿՎԱԾ Է _____:

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ԿՈՂ. 3:1-4

*1 Արդ <u>եթե</u> Քրիստոսի հետ հարություն առաք, ապա փնտրե՛ք այն, ինչ վերևում է, որտեղ Քրիստոսն է՝ Աստծու աջ կողմում նստած: 2 Վերևում եղած բաների մասի՛ն մտածեք և ոչ թե այն, ինչ երկրի վրա է: 3 Որովհետև դուք մեռաք, ու ձեր կյանքը <u>ծածկված է</u> **Քրիստոսի հետ** Աստծու մեջ: 4 Բայց երբ Քրիստոսը՝ մեր կյանքը, հայտնվի, այն ժամանակ դուք էլ **<u>նրա հետ</u>** փառքով կհայտնվեք:*

- ***Ծածկել նշանակում է ինչ-որ բանի (կամ որևէ մեկի) վրա բան դնել/գցել/տեղադրել՝ պաշտպանելու, պահպանելու, պատսպարելու կամ ծածկով պատելու վնասից, կորստից կամ վտանգից:***

  Քրիստոսում ծածկված կյանքը Աստծո մեջ ամենաապահով կյանքն է:

  *Սաղ. 91:1 - 1 Բարձրեալի **ծածկոցի** տակ բնակողը Ամենակարողի շուքի տակ է հանգստանում: 2 Ես Տիրոջը կասեմ. Իմ ապավե՛ն և իմ ամրո՛ց, իմ Աստվա՛ծ, որի վրա եմ հույս դրել: 3 Որովհետև նա կփրկի քեզ որսացողի որոգայթից, չար ժանտամահից: 4 **<u>Նա քեզ կծածկի</u>** իր փետուրներով, նրա թևերի տակ ապահով կլինես. նրա ճշմարտությունը վահան է և զրահ:*

I. ՁԵՐ ԿՅԱՆՔԸ <u>ԾԱԾԿՎԱԾ Է</u> ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏ ԱՍՏԾՈՒ ՄԵՋ:

- ***Սա հետաքրքիր հատված է. Իսկ ինչպե՞ս է ձեր կյանքը ծածկված Քրիստոսի հետ Աստծո մեջ:***

  *Հռ. 6:4 – 4 Մկրտությամբ **<u>նրա հետ</u>** թաղվեցինք մահի մեջ, որպեսզի ինչպես Քրիստոսը մեռելներից Հոր փառքով հարություն առավ, այնպես էլ մենք նոր կյանքով ընթանանք: 5 Որովհետև <u>եթե</u> նրա մահվան նմանությամբ **<u>նրա հետ</u>** միացանք, ապա նրա հարությամբ նույնը կլինենք: 6 Իմացե՛ք, որ մեր հին մարդը **<u>նրա հետ</u>** խաչվեց, որպեսզի մեղքի մարմինը կործանվի, որ այլևս մեղքին չծառայենք: 7 Որովհետև ով մեռնում է, ազատված է մեղքից: 8 Իսկ եթե **<u>Քրիստոսի հետ</u>** մեռանք, հավատում ենք, որ **<u>նրա հետ էլ</u>** կապրենք:*

Նրա հետ թաղվեցինք մահի մեջ...

Նրա հետ միացանք...

Նրա հետ խաչվեցինք...

Նրա հետ մեռանք...

Նրա հետ էլ կապրենք...

- ***Սա հետաքրքիր հատված է. Ահա թե Ինչպես է ձեր կյանքը ծածկված Քրիստոսի հետ Աստծո մեջ:***

Կող. 3:3 – Որովհետև դուք մեռաք, ու ձեր կյանքը ծածկված է ***Քրիստոսի հետ*** *Աստծու մեջ:*

II. ԱԴԱՄԸ ՆԱԽԸՆՏՐԵՑ ԾԱԾԿՎԵԼ ԱՍՏԾՈՒՑ, ԱՅԼ ՈՉ ԹԵ ԾԱԾԿՎԵԼ ԱՍՏԾՈ ԿՈՂՄԻՑ:

Ծնն. 2:8 – 8 Եւ Եհովա Աստուած արեւելքի կողմը ***Եդէմի*** *մէջ մի պարտէզ տնկեց, եւ իր շինած մարդը* ***դրաւ*** *այնտեղ:*

- ***Ի՞նչ փորձեցին անել Ադամն ու Եվան, երբ մեղքը մտավ աշխարհ: Նրանք հիմարաբար ծածկեցին իրենց մերկությունը թզենու տերևներով և փորձեցին թաքնվել Աստծուց:***

III. ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ԼԻՆԵԼ ԱՍՏԾՈ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՈՒՄ, ԲԱՅՑ ՈՉ ԱՍՏԾՈ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՐ ՄԵՋ:

Ծնն. 3:8 – Եւ Եհովա Աստուծո ***ձայնը լսեցին,*** *որ օրվա* ***հով*** *ժամին պարտէզում ման էր գալիս. Եւ Ադամը եւ իր կինը* ***թաքնվեցին*** *Եհովա Աստծո երեսից (ներկայությունից) պարտէզի* ***ծառերի մէջ:***

- ***Այժմ, Աստծո ձայնին վազելու փոխարեն, նրանք փախչում են Նրանից և փորձում թաքնվել Աստծուց:***

Հայտնություն 6:15-16 – 15 Եվ երկրի թագավորները, մեծամեծներն ու հարուստները, հազարապետներն ու զորավորները, բոլոր ծառաներն ու բոլոր ազատները ***թաքնվեցին քարայրներում*** *ու լեռների ծերպերում: 16 Եվ լեռներին ու ժայռերին ասում էին. Ընկեք մեզ վրա ու ծածկեք մեզ գահի վրա նստողի երեսից և Գառան բարկությունից...*

IV. ՔՐԻՍՏՈՍԸ ԾԱԾԿՈՒՄ Է ՁԵԶ և ՁԵՐ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԻՐ ԹԱՆԿԱԳԻՆ ԱՐՅԱՄԲ:

*Ծնն. 3:21 – Եւ Եհովա Աստուածն Ադամի եւ նորա կնոջ համար **կաշվից** հանդերձներ շինեց, եւ **հագցրեց (ծածկեց)** նորանց:*

Սաղմոս 32:1 – Երանի՜ նրան, ում անօրենությունը թողություն գտավ, և ում մեղքը ծածկվեց:

Ղուկաս 15:22 – Հայրն իր ծառաներին ասաց. "Իսկույն բերե՛ք լավագույն պատմուճանը ու հագցրե՛ք նրան, մատին մատանի՛ դրեք և ոտքերին՝ կոշիկներ:

*Հայտնություն 3:18 – Ես քեզ խորհուրդ եմ տալիս. գնի՛ր ինձնից կրակի մեջ թրծված ոսկի, որ հարստանաս, **և սպիտակ զգեստներ**, որ հագնես, որպեսզի քո մերկությունը չերևա, և չամաչես. աչքերիդ դե՛ղ դիր, որ տեսնես:*

Նրա հետ թաղվեցինք մահի մեջ...

Նրա հետ միացանք...

Նրա հետ խաչվեցինք...

Նրա հետ մեռանք...

Նրա հետ էլ կապրենք...

*Կող. 3:3 – Որովհետև դուք մեռաք, ու ձեր կյանքը ծածկված է **Քրիստոսի հետ** Աստծու մեջ:*

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ